

ԻՆՉՊԵՍ ԱՊՐԵԼ ՎԵՉ ԿՅԱՆՔ

Ինչ կարող է անել Աստված քո նման
սովորական մարդու հետ

Մաս 5

Ա Մնացորդաց 4:9-10

Գաբելը մի անձնավորություն էր, որ որոշակիորեն տարբերվում էր ամբոխից: 600-ից ավելի անունների մեջ Աստված առանձնացնում է այս մեկին, տալով նրան հատուկ նշանակություն: Այժմ տեսնենք թե՞ ինչն է, որ Գաբելին դարձրեց այսպիսի առանձնահատուկ մեկը:

«Եվ Գաբելը փառավոր էր իր եղբայրներից, և նրա մայրը նրա անունը Գաբել դրավ, ասելով թե Յավով ծնեցի: Եվ Գաբելը կանչեց Բարայելի Աստծուն ասելով. Ոհ եթե ինձ օրհնեիր և իմ սահմանը մեծացնեիր և ձեռքդ ինձ հետ լիներ, և ինձ չարիցն ազատեիր, որ ինձ տրտմություն չլիներ: Եվ Աստված բերավ նրա վրա նրա խնդրածը.» Ա Մնացորդաց 4:9-10

Երեք առանձնահատկությունները, որ մեկին դարձնում են վեհ անձնավորություն, հետևյալներն են:

1. Պետք է մեծ ձգտումներ ունենաս

«... Ոհ եթե... իմ սահմանը մեծացնեիր!»

Մենք հաճախ շփոթում ենք:

- * Խոնարհությունը վախի հետ
- * Բավարարվածությունը ծուլության հետ
- * Սահմանափակ մտածողությունը հոգևորության հետ

2. Պետք է ունենաս աճող հավատք

«Գաբելը սովորական մարդ էր, բայց կարողացավ ապրել վեհ կյանք:»

3. Պետք է ունենաս իսկական աղոթքի կյանք

«Գաբելը կանչեց... Աստծուն...»

Երեք խնդրանք՝

* Նա աղոթեց իր կյանքում Աստծո զորությունը ունենալու համար

«Ոհ եթե ... ինձ օրհնեիր»

* Նա աղոթեց իր կյանքում Աստծո ներկայությունը ունենալու համար

«... և ձեռքդ ինձ հետ լիներ.»

* Նա աղոթեց իր կյանքում Աստծո հովանավորությունը ունենալու համար

«... և ինձ չարից ազատեիր, որ ինձ տրտմություն չլիներ.»

Հաջորդ Քարոզի Թեման
ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ԱՍՏՎԱԾ ՄԵԿԻՆ
ՈՉՆՉՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԱՐՁՆԵԼ ԿԱՐԵՎՈՐ
ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
Սարո Խաչիկեան